ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"4" փետրվարի 2011թ. №9-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՎԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.3-րդ կետով, որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում 2011-2012 ուսումնական տարում ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվել ցանկացող քաղաքացիների ընտրության կազմակերպման աշխատանքային պլանը (այսուհետ՝ պլան)՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարածքային զինվորական կոմիսարներին՝ ապահովել պլանով նախատեսված միջոցառումների կատարումը:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011 թ. փետրվարի 4
ք.Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2011թ. փետրվարի 4-ի 9-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում 2011-2012 ուսումնական տարում ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվել ցանկացող քաղաքացիների ընտրության կազմակերպման

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու անձինք
1	2	3	4
1	Ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու կարգի վերաբերյալ ՀՀ ՋՈՒ գլխավոր շտաբի պետի և ՀՀ զինվորական կոմիսարի հրամանների և այլ իրավական ակտերի ուսումնասիրում	Մինչև 10.02.2011թ	Զինվորական կոմիսարներ, Զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչության աշխատակիցներ
2	Ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու կարգի, թեկնածուներին ներկայացվող չափանիշների վերաբերյալ ցուցադրական, տեղեկատվական վահանակների ստեղծում հանրակրթական ուսումնական հաստատություններում	Մինչև 20.02.2011թ.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններ և զինղեկներ
3	Ռազմաուսումնական հաստատություններ ընդունվել ցանկացող թեկնածուների ընտրության գործընթացի կազմակերպման վերաբերյալ սեմինար-պարապմունքների անցկացում դպրոցների տնօրենների և զինղեկների հետ	Մինչև 01.03.2011թ	Զինվորական կոմիսարներ, զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչության աշխատակիցներ
4	Հանրակրթական ուսումնական հաստատություններից ստացված հայտերի, ժամկետային զինվորական ծառայություն անցած կամ անցնող քաղաքացիներից դիմումների ընդունում, ամփոփում և ռազմաուսումնական հաստատություններ ընդունվել ցանկացող թեկնածուների ցուցակների կազմում	Մինչև 10.03.2011թ	Զինվորական կոմիսարներ, զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչության աշխատակիցներ
5	Ռազմաուսումնական հաստատություններ ընդունվել ցանկացող թեկնածուների բարոյահոգեբանական և առողջական վիճակի ուսումնասիրության անցկացում, ֆիզիկական պատրաստվածության նորմատիվների ընդունում	Մինչև 10.03.2011թ.	Զինվորական կոմիսարներ, զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր
6	Թեկնածուների ռազմական մասնագիտական կողմնորոշման համար համապատասխան հանձնաժողովի ստեղծում և դրա աշխատանքների կազմակերպում	Մինչև 25,03,2011	Զինվորական կոմիսարներ, զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր

7	Ռազմաուսումնական հաստատություններ ընդունվել ցանկացող թեկնածուների այցելությունների կազմակերպում մարզում տեղակայված զորամասեր	Մինչև 01,05,2011	Զինվորական կոմիսարներ, զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր
8	Ռազմաուսումնական հաստատություններ ընդունվել ցանկացող թեկնածուների և պատերազմի վետերանների, զորամասերում լավագույն զինծառայողների հետ հանդիպումների կազմակերպում, անհատական հարցազրույցների և կինոդիտումների կազմակերպում	25,05,2011թ	Զինվորական կոմիսարներ, զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր, հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններ և զինղեկներ
9	Նախազորակոչիկների կցագրման աշխատանքների ընթացքում բացատրական աշխատանքների կազմակերպում երիտասարդների հետ	Մշտապես	Զինվորական կոմիսարներ, զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր
10	Մարզային և տեղական լրատվամիջոցներով ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու կարգի, պայմանների, ինչպես նաև թեկնածուների հավաքագրման համար քարոզչական (ագիտացիոն) նյութերի հրապարակում	Մշտապես	Զինվորական կոմիսարներ, զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր
11	«Մոնթե Մելքոնյան» ռազմական վարժարանը համալրելու նպատակով ագիտացիոն, բացատրական աշխատանքների կազմակերպում	Մինչև 30.05.2011թ	Զինվորական կոմիսարներ, զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչության աշխատակիցներ
12	Թեկնածուների ընտրության վերաբերյալ զեկուցագրերի ներկայացում հանրապետական զինկոմիսարիատ	Մշտապես	Զինվորական կոմիսարներ
13	Ռազմաուսումնական հաստատություններ ընդունվել ցանկացող թեկնածուների փաստաթղթերի նախապատրաստում և դրանց ներկայացում հանրապետական զինկոմիսարիատ	Մինչև 25.06.2011թ	Նախնական զինվորական պատրաստության գծով տեսուչներ
14	Ռազմաուսումնական հաստատություններ ընդունվել ցանկացող թեկնածուների ներկայացում ընդունող հանձնաժողովներին:	ՀՀ զինվորական կոմիսարի հրահանգով	Զինկոմիսարիատների զորակոչի կազմակերպման բաժինների պետեր, Նախնական զինվորական պատրաստության գծով տեսուչներ:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան